ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիր՝ «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-1-ԵՊԲՀ»

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ստոմատոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի աշխատանքների կազմակերպման նպատակով ատամնաբուժական գործիքների, նյութերի, ֆանտոմային մոդելների և սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի հոկտեմբերի 30-ին ժամը՝ 10:54-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2024 թվականի հոկտեմբերի 31-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N1: Հարգելի գործընկեր, 68-րդ չափաբաժնի՝ <<Մանրադիտակ նախատեսված ստոմատոլոգիական գործնական դասընթացների համար>> համար խնդրում ենք կատարել տեխնիկական պարամետրերի փոփոխություն ՝ համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման հավելված 1-ի կարգի 22-րդ կետի համաձայն Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ: մասնավորապես ՝ 1-ին - խոշորացման աստիճանը առնվազն 3.4 x տեսողական դաշտի տրամագիծ 65 - առնվազն 3.2 x տեսողական դաշտի տրամագիծ առնվազն 65 / խոշորացման աստիճանը առնվազն 5,4x տեսողական դաշտի տրամագիծ 42 - առնվազն 4,9x տեսողական դաշտի տրամագիծ առնվազն 42 / խոշորացման աստիճանը առնվազն 8,5x տեսողական դաշտի տրամագիծ 26 - առնվազն 8,1x / խոշորացման աստիճանը առնվազն 21,2x տեսողական դաշտի տրամագիծ 10 - առնվազն 20,3 x տեսողական դաշտի տրամագիծ առնվազն 10 3-րդ՝• f=190-300mm ֆոկուսային հեռավորությամբ ինքնակարգավորվող լինզաների համակարգ (VarioDist Lens տեսակի խոշորացման համակարգ f190-300mm) – կհամարվի որպես համարժեք f=200-310mm 6-րդ՝• LED լուսավորում, պայծառ սպիտակ, ստվերից ազատող LED լուսարձակ, որի կյանքի տևողությունը առնվազն 60 000 աշխատանքային ժամ է - առնվազն 50 000 աշխատանքային ժամ է 8-րդ Վերտիկալ առանցքի շուրջ պտտվող առաջին թևի երկարությունը առնվազն 280մմ է, երկրորդ, 4 կողմ շարժման հնարավորությունով, թևի երկարությունը առնվազն 580մմ - թևի երկարությունը առնվազն 240մմ է 10-րդ՝• սեղանի վրա դրվող մանրադիրակ մետաղական տակդիրով (տակդիրի չափսերը- երկարությունը՝ առավելագույնը 55սմ, լայնությունը՝ առավելագույնը 46սմ) - լայնությունը՝ առավելագույնը 48սմ):

Պարզաբանում N1:

Հարգելի հնարավոր մասնակից,

ի պատասխան Ձեր հարցմանը հայտնում ենք հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

Նույն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Նույն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն Օրենքի 13-րդ հոդվածի 1-1, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

Գնման առարկայի բնութագրերը

1. պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 22-րդ կետի համաձայն՝

22. գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ

1. Պատվիրատուն ինքնուրույն է որոշում և համապատասխանաբար կազմում իր կարիքների համար անհրաժեշտ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը՝ պահպանելով գնումների օրենսդրության պահանջները:
2. Ընթացակարգի 68-րդ չափաբաժնով սահմանված՝ ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը կազմված է ելնելով պատվիրատուի իրական կարիքներից, պահպանելով գնումների օրենսդրության վերոնշյալ պահանջները և չեն պարունակում որևէ հղում:
3. Ձեր կողմից հարցմամբ բացի գրավոր հայտարարությունից չի ներկայացվել գնման ընթացակարգի հրավերի 68-րդ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրով ապրանքի միայն մեկ մատակարարին համապատասխանության որևէ հիմնավորում:
4. Միաժամանակ հայտնում ենք, որ հրավերի տեխնիկական բնութագիր հավելվածում բոլոր ապրանքատեսակների մասով սահմանված է հետևյալ պայմանը՝

   Եթե որևէ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին, կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:

   Վերոնշյալով պայմանավորված հայտնում ենք, որ եթե հարցումը կատարված է մասնակցության նպատակով և հնարավոր մասնակիցը գտնում է, որ իր մասնակցությունը սահմանափակվում է ընթացակարգի հրավերի ցանկացած, այդ թվում նաև 68-րդ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրի այն հատկանիշներով, որոնք իր համոզմամբ և հետագայում հստակ հիմնավորմամբ պարունակում են հղում կամ հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին, կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ապա այդ հատկանիշների մասով կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը, պայմանով, որ որպես համարժեք առաջարկվող հատկանիշները պետք է համարժեք լինեն պատվիրատուի այն կարիքին, որի բավարարման նպատակով իրականացվում է տվյալ գնման գործընթացը:
5. Հրավերով սահմանված է նաև, որ ապրանքների գնման դեպքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Բացի այդ, 2023 թվականին համալսարանը հայտարարել է «ԷԱՃԱՊՁԲ-2023/16-1ԵՊԲՀ» ծածկագրով մանրադիտակի գնման ընթացակարգ: Նշված մանրադիատակի տեխնիկական բնութագիրը լիարժեք համապատասխանում է «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի 68-րդ չափաբաժնով սահմանված մանրադիտակի տեխնիկական բնութագրին: Այդ մրցույթի շրջանակներում հայտ են ներկայացրել թվով երկու մասնակից, որոնք առաջարկել էին երկու տարբեր արտադրողների մանրադիտակներ, որոնց տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ համապատասխանում էին հրավերով սահմանված բնութագրի պարամետրերին: Խնդրում ենք առաջնորդվել հրավերով սահամանված պարտադիր և թույլատրելի պայմաններով :

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Մերի Կարապետյանին: Հեռախոս՝ 011 621 000 (249)

Էլ.փոստ՝ marketinysmu5@gmail.com

«ԷԱՃԱՊՁԲ-2025/16-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Մեյրանյան

Անդամներ՝ _____ Ա. Հակոբյան

_____ Շ. Ղուկասյան

Քարտուղար՝ _____ Մ.Կարապետյան

ОБЪЯВЛЕНИЕ

о разъяснении приглашения

Настоящий текст объявления утвержден решением оценочной комиссии №2 от 31 октября 2024 года и опубликован в соответствии со статьей 29 Закона РА «О закупках».

Код процедуры «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-1-ԵՊԲՀ»

Оценочная комиссия по процедуре закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-1-ԵՊԲՀ» организованная с целью приобретения стоматологических инструментов, материалов, фантомных моделей и устройств для организации работы центра передового опыта в стоматологическом образовании фонда «Ереванского государственного медицинского университета имени Мхитара Гераци» ниже предоставляет запрос полученный от 30 октября 2024 года в 10:54 часов, относительно приглашения с тем же кодом и разъяснение по нему, предоставленное 31 октября 2024 года.

Запрос N 1: Уважаемый коллега, в лоте № 68 <<Микроскоп предназначен для стоматологической практики>> просим внести изменения в технические параметры в соответствии в соответствии с пунктом 22 приказа приложения 1 постановления Правительства РА от 4 мая 2017 года № 526-Н. При определении характеристик предмета закупки следует принять во внимание,что они должны быть удовлетворены более чем одним возможным участнико. В частности:

1-ое • Увеличение не менее 3,4 х диаметра поля зрения 65 - не менее 3,2 х диаметра поля зрения не менее 65 / увеличение не менее 5,4 х диаметра поля зрения 42 - не менее 4,9 х диаметра поля зрения не менее 42 / увеличение не менее 8,5-кратного диаметра поля зрения 26 - не менее 8,1-кратного / увеличение не менее 21,2-кратного диаметра поля зрения 10 - не менее 20,3-кратного диаметра поля зрения не менее 10.

3-е • Система саморегулирующихся объективов с фокусным расстоянием f=190–300 мм (система масштабирования типа объектива VarioDist f190–300 мм) – будет считаться эквивалентной f=200–310 мм.

6-е: • LED светодиодное освещение, ярко-белая, антитеневая светодиодная фара со сроком службы не менее 60 000 рабочих часов - не менее 50 000 рабочих часов 8. Длина первого рычага, вращающегося вокруг вертикальной оси, составляет не менее 280 мм, второго - 4. боковые с возможностью перемещения, длина кронштейна не менее 580 мм - длина кронштейна не менее 240 мм

10-е: • Небольшая настольная подставка с металлической подставкой (размеры стойки - длина: макс. 55 см, ширина: макс. 46 см) - ширина: макс. 48 см.

Разъяснение N 1

Уважаемый потенциальный участник,

в ответ на ваш запрос сообщаем следующее:

Согласно статье 3, части 1, пункту 1 Закона РА "О закупках":

1. Целью настоящего закона является предоставление стоимости для рассмотрения в процессе закупок, а именно:

1) приобретение товаров, работ и услуг в соответствии с потребностями для выполнения возложенных на клиента полномочий с адекватной компенсацией;

Согласно пункту 3 части 2 статьи 3 выше указанного Закона:

Процесс закупок основан на следующих принципах.

3) равенство участия в процессе закупок для любого лица, независимо от того, является ли оно иностранным физическим лицом, организацией или лицом без гражданства.

Согласно части 1 статьи 7 выше указанного Закона:

1. Любое лицо, независимо от того, является ли оно иностранным физическим лицом, организацией или лицом без гражданства, имеет равное право участвовать в процессе закупки.

Согласно части 1-1, 3, 4 и 5 статьи 13 выше указанного Закона:

Характеристики предмета покупки

1. должно полностью и ясно описывать характеристики приобретаемого товара, работы или услуги, условия их приобретения и оплаты, исключая вариантное толкование. В договор включаются технические характеристики предмета закупки, включающие в себя и цену договора.

4) включать полное и адекватное описание характеристик, технических данных предмета закупки, а в случае работ - также перечень объемов, график и другие неценовые условия.

3. Исходя из особенностей объекта закупки, их характеристики включают, насколько это возможно, качество, стандарт, безопасность, условные обозначения, терминологию, упаковку, обращение, размер, конструкцию приобретаемого продукта, работы или услуги, а также четкое описание условий, связанных с другими особенностями объекта закупки, на основе международных стандартов и нормативно-технических документов и стандартов, действующих в Республике Армения, а при их отсутствии - временных технических условий.

5. Характеристики предмета закупки не должны содержать требования или ссылки на какой-либо товарный знак, фирменное наименование, патент, эскиз или модель, страна происхождения или конкретный источник или производитель, если без них невозможно описать предмет закупки.При использовании ссылок описание должно содержать слова «или аналогичный».

Согласно пункту 22 Порядка организации процесса закупок, изданного постановлением Правительства РА №526-Н:

22. при определении характеристик предмета закупки следует учитывать, что они должны удовлетворять более чем одному потенциальному участнику, за исключением закупок, совершаемых в случаях, согласованных с руководителем заказчика по основании, предусмотренном пунктом 23 подпункта 4 настоящего приказа, и в случаях, согласованных с руководителем заказчика, предусмотренном пунктом "г" пункта 21 подпункта 1 того же приказа.

Учитывая вышеизложенное, мы находим, что

1. Заказчик самостоятельно определяет и соответственно составляет необходимые для его нужд технические характеристики объекта закупки с соблюдением требований законодательства о закупках.
2. 2. Техническая характеристика товара, определенная лотом №68 процедуры, составляется исходя из реальных потребностей заказчика с соблюдением вышеуказанных требований законодательства о закупках и не содержит каких-либо ссылок.
3. Кроме письменного заявления, по Вашему запросу не представлено обоснование соответствия товара, только одному поставщику техническим характеристикам, определенным в 68-й части приглашения на процедуру закупки.

4. При этом сообщаем Вам, что в технических характеристиках приглашения для всех видов продукции определено следующее условие:

**Если в характкристике, изложенные в любом лоте, включены ссылки на какой-либо товарный знак, торговое наименование, патент, дизайн или модель, страну происхождения или конкретный источник или производителя, применяется фраза «или аналогичный».*

4. В связи с вышеизложенным сообщаем, что если запрос был сделан с целью участия и потенциальный участник считает, что его участие ограничивается каким-либо признаком приглашения на процедуру, в том числе теми особенностями технической характеристики, которые определеные лотом №68, который, по его мнению, и с дальнейшим четким обоснованием содержит ссылку или ссылки на торговое наименование, патент, эскиз или модель, страну происхождения или конкретный источник или производителя, фраза «или аналогичный» применяется в отношении таких характеристик при условии, что предлагаемые функции должны быть эквивалентными свойства, потребностям клиента, для удовлетворения которых осуществляется данный процесс покупки.

5. В приглашении также установленно: что в случае приобретения товара оценочная комиссия процедуры также оценивает соответствие полных описаний представленного товара согласно требованиям приглашения.

Кроме того, в 2023 году университет объявил процедуру приобретения микроскопа с кодом «ԷԱՃԱՊՁԲ-2023/16-1-ԵՊԲՀ» Технические характеристики указанного микроскопа полностью соответствуют техническим характеристикам микроскопа, определенным 68-й частью процедуры с кодом «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-1-ԵՊԲՀ» В рамках этого конкурса два участника подали заявки, в которых предлагались микроскопы двух разных производителей, технические характеристики которых полностью соответствовали параметрам спецификации, указанным в приглашении.Пожалуйста, руководствуйтесь обязательными и допустимыми условиями, указанными в приглашении.

Для получения дополнительной информации относительно этого объявления, пожалуйста, свяжитесь с координатором закупок Мэри Карапетян. Телефон: 011 621 000 (249)

Эл. почта marketinysmu5@gmail.com

Оценочная комиссия процедуры закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-1-ԵՊԲՀ»

Комиссия

Председатель _____ А.Сейранян

Члены _____ А. Акопян

_____ Ш. Гукасян

Секретарь _____ М. Карапетян